

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2021 թվականի  
մայիսի 27-ին կայացած Գիտական Խորհրդի N 9 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 34-ը (ցուցակը կցվում է)

**Օրակարգ**

1. 2020/2021 ուստարվա մասնագիտական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման ընթացքն ամփոփումը /զեկ.Ս.Ս.Քելյան/
2. «Երկրաֆիզիկայի» ամփոփի վարիչի հաշվետվությունը ամփոփում կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ.Ս.Ս.Մկրտչյան/
3. Գիտական հաղորդում
4. Մրցույթ
5. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ՀՄԵՅԻՆ.** Ս.Քելյանի հաղորդումը ամփոփումը 2020/2021 ուստարվա մասնագիտական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման ընթացքի վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց մասնագիտական և ուսումնական պրակտիկաների կազմակերպման ձևը, երթուղիները գիշերակացով պրակտիկաների ցանկը և ժամանակացույցը: Մասնավորապես նշեց որ գիշերակացով պրակտիկաները կայանալու են Բյուրականի և Ծաղկաձորի հանգրվաններում:

**ՀԱՐՅԵՐ ՏՎԵՅԻՆ.** Ս.Ներսեսյանը փորձեց ճշտել անհրաժեշտության դեպքում արդյո՞ք ղեկավարին թույլ կտրվի ինքնուրույն կազմակերպել մեկ կամ երկու երթուղի Ծաղկաձորից դեպի Հանքավան:

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ս.Քելյանը պատասխանեց, որ փոխադրամիջոց տրամադրելու վերաբերյալ ռեկտորատի հետ կա բանավոր պայմանավորվածություն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ.** Դեկան Մ.Ա.Գրիգորյանն իր ելույթում նշեց,-հուրախությունն մեզ մենք արդեն դուրս ենք գալիս քովիդով պայմանավորված ճգնաժամային իրավիճակից և այս տարի պրակտիկաներն անց են կացվելու ոչ հեռավար: Նա նշեց պրակտիկայի բովանդակային կարևորությունը մասնագետներ պատրաստելու հարցում: Այդ ուղղությամբ մեծ ծավալի աշխատանքներ ունենք կատարելու ամբիոնի վարիչները և պրակտիկաների ղեկավարները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**2. ԼՄԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ Մ.Ս.Մկրտչյանի հաշվետվությունը 2020/2021 ուս.տարում ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Նա մանրամասն ներկայացրեց ամբիոնի ձեռքբերումներն ու ամբիոնում կատարված աշխատանքը: Խոսեց հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի աշխատակիցների կողմից որոշակի առարկայական ծրագրեր են լրամշակվել: Խոսեց ամբիոնի ասպիրանտների մասին և իրենց կողմից կատարված ատենախոսության ընթացքի վերաբերյալ: /Հաշվետվությունը կցվում է/:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.** Մ.Ա.Գրիգորյանը հարցրեց, թե ինչպե՞ս են կազմվում ամբիոնային ծանրաբեռնվածությունները և ինչպե՞ս են լուծվել թերծանրաբեռնվածության խմորները

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Լրացվել են հարակից ամբիոններից վերցված ժամերի օգնությամբ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**պրոֆ.Վ.Պ.Վարդանյանն** իր ելույթում առանձնացրեց ամբիոնում կատարված դրական աշխատանքը, գիտական հոդվածների տպագրումը: Ցավով նշեց ամբիոնի թերծանրաբեռնվածության հետ կապված խնդիրները, որոնք հնարավորինս լրացվում են հարակից ամբիոններից վերցված ժամերով: Կարևորեց Կիրառական սեյսմալոգիա ծրագրի բացումը: Խոսքի ավարտին նշեց գիտական և ուսումնական աշխատանքների բարձր մակարդակի մասին և առաջարկեց ներկայացված ժամանակահատվածում ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**դոց.Մ.Ա.Գրիգորյանը** նշեց, որ ամբիոնը համալրված է բարձրակարգ մասնագետներով և հույս հայտնեց, որ ամբիոնի առջև ծառայած խնդիրները, կապված ուսանողների թվաքանակի հետ, կրում են ժամանակավոր բնույթ: Անընդունելի համարեց բնագիտական թևում մեկ դրույքաչափի համար 700 ժամի սահմանումը: Խոսքի ավարտին Մ.Գրիգորյանը պաշտպանեց Վ.Վարդանյանի առաջարկը և նույնպես առաջարկեց ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

**3. ԼՄԵՑԻՆ.** Ս.Հ.Հայրոյանի եզրակացությունը Երեմ Հազարապետի Բաղդասարյանի «Ջրամբարային հիդրոհանգույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների արդյունավետության բարձրացման ուղիները Տոլորսի ջրամբարի օրինակով» թեմայով ատենախոսության վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց և հիմնավորեց արձանագրած դիտողությունները: Ս.Հայրոյանը նշեց նաև, որ ն ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ-ում աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Երեմ Հազարապետի Բաղդասարյանը, արժանի է Ձ.01.01. - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը: Առաջարկում է հաստատել պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի կողմից նորկայացրած կարծիքը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի կողմից ներկայացրած եզրակացությունը Երեմ Հազարապետի Բաղդասարյանի «Ջրամբարային հիդրոհանգույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների արդյունավետության բարձրացման ուղիները Տոլորսի ջրամբարի օրինակով» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

**4. ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի** հաղորդումը **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի»** ամբիոնի դոցենտներ

երկր.գիտ.թեկնածու Հովհաննես Հակոբի Սարգսյանի, Եսթեր Մուսի Մանուկյանի, **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի դոցենտներ երկր.գիտ.թեկնածու Մամվել Աշոտի Առաքելյանի և Ռուբեն Սուրենի Մովսեսյանի, **«Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության»** ամբիոնի դոցենտ աշխ.գիտ.թեկնածու Վարդուհի Գուրգենի Սարգսյանի և **նույն** ամբիոնի պրոֆեսոր, աշխ.գիտ.դոկտոր Թրահել Գերասիմի Վարդանյանի, **«Զրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության»** ամբիոնի դոցենտ երկր.գիտ.թեկնածու Արտաշես Հովհիկի Աղիսյանի, **«Երկրաֆիզիկայի»** ամբիոնի դոցենտ երկր.գիտ.թեկնածու Գագիկ Վարազդատի Մարկոսյանի, **«Սոցիալ-տնտեսական աշխարհագրության»** ամբիոնի դոցենտներ աշխ.գիտ.թեկնածու Նարեկ Աղվանի Հարությունյանի և Ակսել Հարությունի Պոտոսյանի և **«Մերվիսի»** ամբիոնի դոցենտներ աշխ.գիտ.թեկնածու Գոռ Փարսադանի Ալեքսանյանի և տնտ.գիտ.թեկնածու Տիգրան Պետրոսի Դավթյանի կողմից ներկայացված դոցենտի և պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ բոլոր մասնակիցների գիտամանկավարժական և ամբիոնում ծավալած գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ դոցենտի և պրոֆեսորի պաշտոններին հավակնելուն:

**Պրոֆ.Վ.Վարդանյանը** նշեց նաև, որ ֆակուլտետի աշխատակիցների ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրվել են ռեկտորատի կողմից և մրցույթին մասնակցելու հնարավորություն են ստացել 12 աշխատակից: **Պրոֆ.Վ.Վարդանյանը** ներկայացրեց **Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության** ամբիոնի նիստի քաղվածքը, որտեղ նշված են պրոֆ.Թ.Վարդանյանի և նույն ամբիոնի վարիչ դոց.Ա.Գրիգորյանի միջև առկա տարաձայնությունները և ամբիոնի աշխատանքային մթնոլորտը ճիշտ ներկայացնելու նպատակով կարդաց ամբիոնի կողմից ներկայացված քաղվածքը:

Քաղվածքում մանրամասնորեն ներկայացված էր պրոֆ.Թ.Վարդանյանի վերաբերմունքը ամբիոնում ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Քաղվածքում մասնավորապես նշված է, որ ամբիոնի վարիչ դոց.Ա.Գրիգորյանը մի քանի անգամ փորձել է հանդիպել պրոֆ.Թ.Վարդանյանին և համագործակցել իր հետ, սակայն այդ փորձերն ձախողվել են: Քաղվածքում նշված է նաև, որ պրոֆ.Թ.Վարդանյանն իր անհաջողությունների մեղքը գցում է ուրիշների վրա: Ամբիոնի նիստի մասնակիցներից դոց.Կ.Ալեքսանյանն առաջարկել է համագործակցության եզրեր գտնել՝ հաշվի առնելով երկար տարիների ընկերությունը: Ելույթ է ունեցել դոց.Հ.Բայանը, ով միացել է դոց.Կ.Ալեքսանյանի առաջարկին՝ համագործակցել և հանդուրժողականություն ցուցաբերել, ստեղծել նորմալ աշխատանքային մթնոլորտ: Այնուհետև ելույթ է ունեցել պրոֆ.Թ.Վարդանյանը և ասել, որ աշխատանքային պարտականություններն ինքը լիովին կատարում է և միայն ասել է հետևյալը. Ամբիոնի վարիչի ընտրություններից առաջ՝ 2019թ-ին պրոֆ.Թ.Վարդանյանը հրավիրել է դոց.Ա.Գրիգորյանին հանդիպման և առաջարկել է, որպեսզի դոց.Ա.Գրիգորյանը հանի իր թեկնածությունը հոգուտ պրոֆ.Թ.Վարդանյանի թեկնածության՝ իրենց ընտանիքների հարաբերությունների մտերմության պահպանման համար: Նշված առաջարկը մերժվել է դոց.Ա.Գրիգորյանի կողմից, ուստի պրոֆ.Թ.Վարդանյանը պահպանում է իր խոսքը և չի ուզում համագործակցել վերջինիս հետ: Դոց.Ա.Գրիգորյանը եզրահագնել է, որ պրոֆ.Թ.Վարդանյանի ցանկությունը միայն ամբիոնի վարիչ լինելն է: Իր պաշտոնավարման 2 տարիների ընթացքում պրոֆ.Թ.Վարդանյանը չի մասնակցում ամբիոնի նիստերին բացառությամբ անձնապես իրեն վերաբերող հարցերի քննարկման նիստերի: Պրոֆեսորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար ամբիոնի 7 անդամներից կողմ են քվեարկել՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1: Այսպիսով ամբիոնը երաշխավորել է պրոֆ.Թ.Վարդանյանին մասնակցելու պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դոց.Պ.Դավթյան** – Եթե ամբիոնի կողմից քննարկման է դրված հարցը ապա ես կուզենայի լսել նաև պրոֆ.Թ.Վարդանյանի խոսքը:

**Պրոֆ.Թ.Վարդանյանն** ասաց, որ իր ասածներն աղավաղված են: -Ոչինչ չեմ ասելու, չեմ ուզում խոսել,-ասաց պրոֆ.Թ.Վարդանյանը:

**Դոց.Ա.Գրիգորյան.** - Գիտխորհրդի անդամների մեծ մասը 2 տարի առաջ կհիշեն **Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության** ամբիոնի վարիչի ընտրությունները, թեկնածությունների քննարկումը: Ինձ համար մտահոգիչ է ամբիոնում ստեղծված նման հարաբերությունը: Այլ բան է անձնական հարաբերությունը, մեկ այլ բան է աշխատանքային հարաբերությունները: Չմոռանանք, որ մեր գործառույթն է ուսանողի հետ տարվող աշխատանքը, ինչի համար շատ կարևոր է օրինակելի ամբիոնային համագործակցությունը: Որպես ամբիոնի վարիչ պաշտոնավարման ընթացքում առաջին քայլը միշտ ես եմ արել, զանգահարելով, դիմելով, իր դեմ որևէ բացասական քայլ չեմ արել, նպատակս մեկն է եղել՝ ամբիոնի աշխատանքային մթնոլորտը պահել նորմալ աշխատանքային վիճակում: Բանը հասել է նրան, որ նույնիսկ ամբիոնի վարիչի ստորագրության անհրաժեշտության պարագայում փաստաթուղթը չի ներկայացվում ինձ, փոխարենը, ստորագրության նպատակով այն տրվում է դեկանին: Անձնական դժբախտ դեպքերի հետ կապված հեռախոսային զանգերը նույնպես մնում են անպատասխան: Այսօր, ներամբիոնային հարցը բերվել է գիտխորհուրդ, քանի որ խաթարված է ամբիոնի աշխատանքային մթնոլորտը, անկախ հարցի կարևորությունից պրոֆ.Թ.Վարդանյանին որևէ բանի մասին տեղեկացնելն իրականացվում է շղթայական ձևով, աշխատակիցների միջոցով, միջնորդությամբ: Ընկերներ, այս ամենին պրոֆ.Թ.Վարդանյանն ունի մեկ պատասխան. ես նախապես ասել եմ հանիր ամբիոնի վարիչի թեկնածությունը այլապես մեր հարաբերությունները կընդհատվեն: Ամփոփելով ելույթս եզրահանգում եմ, որ պրոֆ.Թ.Վարդանյանի ցանկությունը մեկն է՝ նա 10 տարի եղել է ամբիոնի վարիչ և չի ուզում, որ ուրիշն էլ երբևէ լինի **Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության** ամբիոնի վարիչ: Իմ առաջարկն այս է՝ գտնենք ընդհանուր մի եզր որպեսզի կարողանանք մեր ջանքերը միավորենլ ի նպաստ ուսանողի:

**Դոց.Շ.Խաչատրյան.** – Առաջին անգամ եմ լսում նման բովանդակությամբ քաղվածք: պրն.Ա.Գրիգորյան, Ձեր խոսքով պրոֆեսորի պաշտոնին հավակնում է մի մարդ, ով պարտաճանաչ չէ, չի մասնակցում ամբիոնային հարցերի քննարկմանը, ուրիշների միջոցով է տեղեկացնում և տեղեկանում: Ակամայից հարց է առաջանում՝ էս տեսակ պրոֆեսոր ամբիոնին պե՞տք է: Ինչո՞ւ է ամբիոնը երաշխավորում պրոֆ.Թ.Վարդանյանի մրցույթին մասնակցելուն:

**Դոց.Ա.Գրիգորյան.** – Ընկերներ, այստեղ կա մասնագիտական և աշխատանքային հարց: Մասնագիտական տեսակետից նա իր պարտականությունները կատարում է հարցը և խնդիրը ստեղծված աշխատանքային մթնոլորտի մասին է: Մրցույթին մասնակցելու երաշխավորությունը տալիս է ամբիոնը և ոչ թե ամբիոնի վարիչը

**Դոց.Ս.Գրիգորյան.** – Դոց.Ա.Գրիգորյանը դիմել է ինձ և ներկայացրել ամբիոնում ստեղծված իրավիճակը: Փորձելով փոխել ամբիոնի մթնոլորտը զրույց եմ ունեցել պրոֆ.Թ.Վարդանյանի հետ և խնդրել, որպեսզի նա մասնակցի ամբիոնի նիստերին և ամբիոնում տարվող աշխատանքներին՝ անկախ իր ունեցած վերաբերմունքից ամբիոնի վարիչի նկատմամբ:

**Դոց.Պ.Դավթյանը.**–Ես համոզված եմ, որ պրոֆ.Թ.Վարդանյանը այն աշխատակիցներից է, ովքեր խորապես ցավում են ամբիոնի համար: Կուզենայի լսել Թ.Վարդանյանին, որից հետո նոր ելույթ ունենայի, սակայն նա խոսելու ցանկություն չի հայտնում՝ տեղից մեկնաբանելով թե,- Այդպես չէ, ճիշտ չէ: Ես շատ մոտ եմ կանգնած 2019 թվականի Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչի ընտրությունների նախապատմությանը և իրազեկ եմ, որ ռեկտորը մերժել էր ամբիոնի վարիչի ընտրություններին մասնակցելու պրոֆ.Թ.Վարդանյանի դիմումը: Ամփոփելով ասեմ, որ համագործակցությունը անհրաժեշտ է, թեկուզ միայն ի շահ ամբիոնի:

**Պրոֆ.Թ.Վարդանյան.** – Ես խնդրում եմ ելույթ ունեցողներն անձնական որևէ ելույթ չունենան, ելույթները թող լինեն բացառապես գործի բերումով, այլապես ես ելույթ կունենամ անձնականով և շատ շատ բաներ կունենամ ասելու, խնդրում եմ հետևողական լինել խնդրանքիս: Բարձրացված հարցը Գիտխորհրդի քննարկման հարց չէ, չի կարելի մարդու անձնականը բերել Գիտխորհուրդ:

**Ղոց.Պ.Դավթյան.** – Սա անձնական չէ, հիմա ես անձնական որևէ բա՞ն ասացի: Դրա համար ասեցի, որպեսզի ելույթ ունենաս և ընտրությունից առաջ հնարավորություն ունենանք ծանոթանալու քո տեսակետին:

**Ղոց.Ս.Գրիգորյան-** Ես նույնպես դեմ եմ անձնականը հանրային դարձնելուն, սակայն, երբ ամբիոնի վարիչը հարց է բարձրացնում աշխատանքային մթնոթյուտի դրական կամ բացասական լինելու վերաբերյալ... սա արդեն անձնական չէ, սա ներամբիոնային և հետևաբար ֆակուլտետային խնդիր է:

**Պրոֆ.Թ.Վարդանյան.** – Ես իր հետ խոսեմ չխոսեմ դա իմ ու իր հարցն է, դա ձեր գործը չէ, ես բոլոր աշխատանքներին նորմալ մասնակցում եմ:

**Ղոց.Ս.Գրիգորյան.** – Բորբոքվելու կարիք չկա, սա ձեր ամբիոնի վարիչի մտահոգությունն է, լավ կլիներ դուք էլ հիմնավորեք ձեր վերաբերմունքը:

**Պրոֆ.Թ.Վարդանյան.** – Հիմնավորելու բան չկա, բոլորը գիտեն...

**Ղոց.Ս.Գրիգորյան** - Եթե դու այդպես ես գտնում ապա խնդիր չկա, թող անդամները հետևություն անեն:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյան, անդամներ՝ պրոֆ.Սարգիս Հրաչիկի Հայրոյան, դոց.դոց.Վահագն Վարազդատի Գրիգորյան, Շահեն Վոլոդյայի Խաչատրյան, ասիստենտ Տաթևիկ Վիլիկի Սաֆարյան:

**ԼՄԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից ներկա էին 34 անդամ, քվեարկության մասնակցել են 34-ը:

«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի դոցենտի պաշտոնում Հովհաննես Հակոբի Սարգսյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 30-ը, դեմ՝ 3, անվավեր՝ 1:

«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի դոցենտի պաշտոնում Եսթեր Սոսի Մանուկյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 1:



«Ռեզիդնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի դոցենտի պաշտոնում Սամվել Աշոտի Առաքելյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ 1, անվավեր՝ 0:

«Ռեզիդնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի դոցենտի պաշտոնում Ռուբեն Սուրենի Մովսեսյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 32-ը, դեմ՝ 1, անվավեր՝ 1:

«Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի դոցենտի պաշտոնում Վարդուհի Գուրգենի Մարգարյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 27-ը, դեմ՝ 5, անվավեր՝ 2:

«Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում Թրահել Գերասիմի Վարդանյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 14-ը, դեմ՝ 19, անվավեր՝ 1:

«Զրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի դոցենտի պաշտոնում Արտաշես Հովհիկի Ադինյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 31-ը, դեմ՝ 3, անվավեր՝ 0:

«Երկրաֆիզիկայի» ամբիոնի դոցենտի պաշտոնում Գագիկ Վարազդատի Մարկոսյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 30-ը, դեմ՝ 4, անվավեր՝ 0:

«Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի դոցենտի պաշտոնում Նարեկ Աղվանի Հարությունյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 26-ը, դեմ՝ 6, անվավեր՝ 2:

«Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի դոցենտի պաշտոնում Ակսել Հարությունի Պոտոսյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 21-ը, դեմ՝ 9, անվավեր՝ 4:

«Սերվիսի» ամբիոնի դոցենտի պաշտոնում Տիգրան Պետրոսի Դավթյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 34-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

«Սերվիսի» ամբիոնի դոցենտի պաշտոնում Գոռ Փարսադանի Ալեքսանյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 26-ը, դեմ՝ 6, անվավեր՝ 2:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* 33-Կողմ և 1-ձեռնպահ արդյունքներով հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ, ըստ որի՝

1. Հովհաննես Հակոբի Սարգսյանն **ընտրվել է** «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի դոցենտի պաշտոնում
2. Եսթեր Սուսի Մանուկյանն **ընտրվել է** «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
3. Սամվել Աշոտի Առաքելյանն **ընտրվել է** «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
4. Ռուբեն Սուրենի Մովսեսյանն **ընտրվել է** «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
5. Վարդուհի Գուրգենի Մարգարյանն **ընտրվել է** «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
6. Թրահել Գերասիմի Վարդանյանը **չի ընտրվել** «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:
7. Արտաշես Հովհիկի Ադինյանն **ընտրվել է** «Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
8. Գագիկ Վարազդատի Մարկոսյանն **ընտրվել է** «Երկրաֆիզիկայի» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
9. Նարեկ Աղվանի Հարությունյանն **ընտրվել է** «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
10. Ակսել Հարությունի Պոտոսյանն **ընտրվել է** «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
11. Տիգրան Պետրոսի Դավթյանն **ընտրվել է** «Սերվիսի» ամբիոնի դոցենտի պաշտոնում:
12. Գոռ Փարսադանի Ալեքսանյանն **ընտրվել է** «Սերվիսի» ամբիոնի դոցենտի պաշտոնում:

## 5. Ընթացիկ հարցեր

**ԼՄԵՑԻՆ.** Դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Հովհիկ Յախշիբեկի Սայադյանի ղոկտորական ատենախոսության «Հայաստանի Հանրապետության ռազմաաշխարհագրական համալիր ուսումնասիրում և գնահատում» թեմայի վերնագրի փոփոխման դիմումի վերաբերյալ:

**ԵԼՈՒՅԹ ՈՆԵՑԱՆ.** Հ.Յա.Սայադյանը նշեց, որ դոկտորական ատենախոսության «Հայաստանի Հանրապետության ռազմաաշխարհագրական համալիր ուսումնասիրում և գնահատում» վերնագիրը հաստատվել է Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2012թ. հոկտեմբերի 09-ին կայացած Գիտխորհրդի նիստում: Դոկտորական ատենախոսության թեմայի աշխատանքում կան դրույթներ որոնք նպատակահարմար է հրատարակել մենագրության և ուսումնական ձեռնարկի տեսքով, հետևաբար հեղինակն առաջարկեց «Հայաստանի Հանրապետության ռազմաաշխարհագրական համալիր ուսումնասիրում և գնահատում» վերնագիրը ենթարկել փոփոխության և հաստատել «Հայաստանի ռազմական աշխարհագրություն» վերնագրով:

**Վ.Վ.Գրիգորյանն** իր խոսքում նշեց, որ Հ.Սայադյանի կողմից առաջարկված՝ «Հայաստանի ռազմական աշխարհագրություն» վերնագիրը որպես դոկտորական ատենախոսության վերնագիր հաստատելը մասնագիտորեն հիմնավոր չէ և չի պարունակում գիտական հետազոտության տարրեր:

**Ա.Հ.Պոտոսյանը** մասնավորեցրեց Գիտ.խորհրդի գործառույթը, այսպես՝ հաստատել կամ մերժել վերոհիշյալ ատենախոսության վերնագիրը: Ա.Պոտոսյանը հղում կատարեց ամբիոնի կողմից ներկայացված քաղվածքին, քանի որ վերջինս արտահայտում է ամբիոնի աշխատակիցների կարծիքն առ այն, որ «Հայաստանի ռազմական աշխարհագրություն» վերնագիրը չի բավարարում դոկտորական ատենախոսության պահանջներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հովիկ Յախշիբեկի Սայադյանի դոկտորական ատենախոսության թեմայի վերնագիրը թողնել 2012թ. հոկտեմբերի 09-ին կայացած Գիտխորհրդի նիստում հաստատված տարբերակով, այն է՝ «Հայաստանի Հանրապետության ռազմաաշխարհագրական համալիր ուսումնասիրում և գնահատում»

Խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան